

Բ.

Նոյնը Ղազարի գիւղերում:

«Մաճկալը մաճին,

Դիւռն ընկաճին,

Ճիտ անեմ (գրկեմ) մաճկալի բաջին,

Հորիքը պտտեմ

Մաճկալի բաջին խորտեմ:

ԱՊԱՆՈՎՈՒԹԻՒՆ «ԽԱՐԲՈՒՆ» ՑԱՆԻՑ

Ջարուրի Ուլիանորաշէն - գիւղում ուլ կամենում է խար-
բուխով չվարակուել, ասում է խարբուխով Հիւանդին.

Ճաղցէն եմ իկեալի,

Կլոխս արոտ է:

Հիւանդը Հարցնում է.

— Դաւան (ուղտը) քանի ոտէն կլլի.

— Ձորս, պատասխանում է առողջը.

— Խազ ու խարբուղս քեզ խէտ փոխս

շարունակում է Հիւանդը:

Ե Ր Ե Ն Ա Ն Ց Ն Ա Ղ Ե Ր

1. Մ Ա Տ Ն Փ Ո Ւ Կ

Ա.

Դարալագեաղի նոր Հայերի մէջ աղջկունք ժողովում են
և իւրեանց միջից ջոկում են մի պուլիս, որ կոչւում է պապ:
Սպա բոլորն էլ իւրեանց ձեռի ցուցամատը դնում են մի տեղ
և պապն իւր աջ ձեռքի ցուցամատը կարգով դիպցնում է նո-
րանց մատերին և արտասանում է այս խօսքերը:

Ուկուլ, դուկուլ, դինազէ

Ջամիլ, մամէլ պիպազէ,

.....

.....

Դանակ արեմ,

Սև խաւու վիզը կտրեմ:

Վերջին խօսքը որի մատին ընկաւ, մատը բռնում են և
աղջկան ծծում են, մինչև խոտառվանի թէ որ տղային պէտք
է ուզէ:

Յ.

Մատխիուկ Հին Նախիջևանում:

Ովի, վանի, կապիտան,

Ձեմի, կոմի, գապիտան,

Լատտան, բիտտան,

Ռոզ, բուզ,

Քէրվա, իզդա,

Կոկին կնեազ:

Գ.

Նոյն խաղը Երևանում և Դաւալու գիւղում:

Աբլոր գիւրլոր,

Ձարուդ, չամբար,

Ոսկէ դամբար,

Հայի հուզի,

Թուրքի թաղի,

Պոմբլա սզի,

Եալալի,

Ղըլըջ, մըլըջ,

Դոյդուր բիտի,

Աբասի:

Դ.

Նոյն խաղը Դարալագեանդի Ազատակ գիւղում:

Ուկոււ, տուկոււ,

Ձարէ, չըմբէ,

Հաւթէ կոնակ,

Մէ պողոնակ.

Դանակ սրի,

Սե խաւի վիզը կարի:

Ե.

Կարբի գիւղում Քայադէթի գաղթականների մէջ:

Ակիէ, գուկիէ Յմրզա,

Մախտէ կոնակ կոկոզա,

Լուսու մաու քարվազա,

Ճուկ պողոնակ ճանին ճուկ:

Զ.

Նոյն խաղը Երևանում:
 Ատատէ, բատատէ Ձամշուլակին
 Ձամամ շուլ, Մի դամբուլ:

Ե.

Նոյն խաղը Ալէքսանդրապոլում.

Ա.

Հատիկ, Հատիկ, Հալուատիկ, Կուտ ուտեմ, կուտման ուտեմ,
 Չալ խնձորիկ, փշատիք, Աւագ դռան պանծիկ անեմ. (պարկեմ):

Բ.

Այլմ, ա'յլմ, աֆանայ Ա'րը գեազար կորխընդայ
 Գեալդը, չըխտը քեափանայ Այլմ, սալմ սալլա բունի
 Սուլէյմանըն սուլինայ, Չա'ք շունի
 Քինդմ Հալաւ բոյնընդայ

2.

Թ Ի Զ Մ Ա Թ Ի Զ

Ա.

Պարալագեազի Նոր Հայերի մէջ աղջկունք բաժանում են
 երկերկու ընկեր և ապա երկու ընկեր իրար դէմ նստած, լայ-
 նացնում են մատերը և չորս ձեռքը իրար վերայ տնկում: Ապա
 միւս աղջկունք թռնում են այդ ձեռքերի վրայից այնպէս
 զգոյշ, որ չգիպչի ոչ ոտերը, ոչ էլ շորի ծալքը: Եթէ գիպչի,
 դիպչողն իւր ընկերով փոխարինում է նստողներին: Սռաջին
 թռչողն ասում է Հետևեալ երգից մի-մի խօսք և միւսները
 իւրեանց թռչելու ժամանակ կրկնում են առաջինի ասածը:

Ըսմըլէ, Հայ ըսմըլէ, Գեօթն խիար իւստիւնա,
 Ըսմըլէ բաբէ տայա, Աթայ մաթայ դայմասըն,
 Բաբէ տատր խաւէլա Թաուր դոյան տիւշմասն,
 Խաւէլա խըզմաթ էլա, Այ Հաւալայ Հաւալայ,
 Խզմաթի բաշ իւստիւնա Բեօրքն գեօթը, դաւալա
 Բաշն դուար իւստիւնա,

3. Ա Ր Թ Ո Ւ Ր Մ Ա

Այլէքտանդրապօլում տղայ երեխայք արթուրմա խաղալիս
մինը կռանում է, միւսները նորա վրայից թռնում են: Առա-
ջինն ասում է Հետեւեալ երգի մի մի տողը և միւսները թըռ-
չելիս կրկնում են:

Կտի կտի մաստանայ,
Կտիկմ գեաղի բոստանայ,
Բոստանյի գէօյդի, գէօյդի,
Դէօյդի, կըլը կըռըլի,
Թանով ապուր թէլրանի,
Կարպետը ծակ քէլրանի,
Գնացի մի մարագ,
Գտաց կնուճ մի կարագ,
Ջարկի պառն կոտրեցի,
Կանթը էրդիկ թարլեցի,
Աթակ մաթակ հէչ բակմագ,

Թառլի կուլին գիւշըմագ,
Աւն էլաւ սարը,
Քար կերաւ, քացալս խմեց,
Արիւն շոեց, պանխր թափեց,
Կօղմ կօրէկ էի ցաներ,
Հաւքերն էին կերեր
Գնացի բերդի դուռը,
Գտաց մի նուռը.
Կէսը հոտած էր, կէսն անուշ,
Շապղաց դնել թռնել հէլրանի,
Շապղաց տանել հէլրանի:

6.

Նոյն խաղը Մշու գաղթականներու մէջ:

Մամուլա, ջան մամուլա,
Մամուլա կու բաւէ տա
Կուբաւէտա տումահօլէ,
Տղմահօլէ ճանճէ մնճէ,
Ճանճէ մնճէ, կռնճէ,

Բարաս եկաւ ճնկլ մնկլ
Արտմը կօրէկ եմ ցանել
Ջիֆրի հաւերն իկերան,
Աթակ մաթակ հէչ դագման
Տիրուն սիրուն նախսորուր:

9.

Նոյնը Ղազախի Ուզունթալա գիւղում:

Համըլէկ, ջան ըսմլէկ,
Համլէկէ բաւէ կալէ,
Բաւէ կալէ չար հաւալ է
Չար հաւալ կըսմաթ էլաւ.

Կըսմաթմ բաշխստիւնայ,
Բաշմ դուար իւստիւնայ
Տիվիս տիվիս կաւանօ,
Ա զըռնօ զըռնօ րէվանօ:

4. Ա Լ Ի Ս — Պ Ա Լ Ի Ս

Ա.

Պարալագեազի Էրզափին գիւղում երկու, երեք չորս կամ աւելի աղջկունք միասին խաղալիս, մինը նորանցից ձեռքի բռնում թագցնում է, որ և է մի առարկայ (մատնոց, թել, մրգեղէն և այլն) և բոլորն էլ բռռները սեղմած դնում են միասին: Մինը, որ կանխապէս Հեռացած է, մօտենում է և և իւր ձեռքը կարգով դնելով ընկերների ձեռքի վերայ, ասում է մի մի խօսք ոտանաւորից, որի վերջին խօսքը եթէ վերջանայ առարկան պաՀող ձեռքի վերայ, այն ժամանակ զտնողը իւրեան կվերցնի առարկան, իսկ եթէ չզտնի, ինքը կտայ այդպիսի մի առարկայ:

Ալիս, պալիս

Ժամտան

Քելի, եարի,

Դուռը բաց:

Բ.

Նոյն խաղը Պարալագեազի Այնազուր գիւղում:

Հստում Հնդում,

Վեր տամ ըստում

Քարէ տնդում,

Դտնեմ ըստում:

5. Ո Տ Ի Փ Ո Ւ Կ

Ա.

Պարալագեազի Արփա գիւղում մի քանի տղայք բոլոր ի շուրջ նստում են և ոտները ձգում շրջանի կէդրոնը: Մինը Հետևեալ ոտանաւորից մի մի տող իւրաքանչիւր ոտի վերայ արտասանում է և վերջին տողը որի ոտին վերջացաւ, նա պէտք է դուրս գայ շրջանից: Այդպէս մէկ մէկ Հանելով մնում է վերջինը, որին կանգնեցնելով մէջ տեղ Հարհրում են ոտերով:

Մօթալ մօթալ,

Քէչրան դուլի,

Թարսի մօթալ,

Նամարասի,

Դին աթար,

Լակոտ գցի,

Դամար դաթար,

Էս դուս գցի.

Հէչրան դուլի,

Ք.

Կամ արտէս:	Քողոճ գցեմ,
Հոգւոյան, դեօպոսան,	Վեր նաղարայ,
Իսուի, երբիք լի.	Ձըխ կըրաղայ:
Սու ին, կուրթ լի,	
Այ գցեմ,	

Գ.

Նոյն խաղը Ղաղախի Ուղունթալայ գիւղում:	
Բիրան բիրան,	Դեօքմաղ,
Իքեան իքեան,	Ղարայ ղըր,
Արվաղը լան,	Գեօմիւր,
Հէօքմաղ,	Գեօթ լի:

6. Թ Ը Ռ Ա Ն Ա Ղ Ի Կ

Ս.

Դարալագեաղի Էրդափին, Քարաղուիս և ալ զրացի գիւղերում լիօքբիկ աղջկունք, բռնելով իրար ձեռքերի մօրթը, բարձրացնում են միմեանց ձեռքերը և երգում:

Ճիւ, ճիւ,	Քամբակ չիբրից,
Ազաճիւ,	Չալ արաց,
Ազաճիւ գնաց Երուտաղէմ,	Չալուար լարաց,
Բուրդ ըրից,	Թը՛ռ... ճնճղիկ:

Վերջին խօսքի վերայ բարձրացնում են ձեռքերը և ուղիւ չէ ասում, նորան տալիս են լիւրտուղ՝ արտիւնքն ձեռքով կամաց զարկում են ուռցրած երեսին:

Բ.

Նոյն խաղը Ալէքսանդրապոլում, ասանց ծածի:

1.

Միօ միօ	—Չիք ու չամիչ,
Փիշօ, փիշօ,	Ո՛ւմ կտանես,
Ո՛ւմ կատուն ես,	—Իմ ձագերուն,
—Սլաբաղի.	Փիշտան կորի:
Խնչ կուզես,	

2.

Ճիւ, ճիւ ճիտոնա,
 Հարսին տարան բատոնա,
 Ես պարոնին տղան եմ,
 Թագաւորին փեսան եմ,
 Պարոն աղբար դուրս արի,
 Ձիդ ու ջորիդ ինձի տուր.

Հեճնեմ էրթամ հնդստան,
 Քեզի բերեմ մատնատան,
 Մատդ դնես փոկստան
 Բու դաղարը հաբ (բոլորը)
 բոստան.

7. Պ Ո Ւ Ց (Կ Ա Կ Ա 2)

Հարուրի Ուլիա Նորաշէն գիւղում երկու աղջիկ մէջք մէջքի տուած բռնում են միմեանց ձեռք և երբորդ աղջիկը կանգնելով Նորանց ձեռքերի վերայ ծափ է տալի և երգում է.

Պուտ ձեր էքին,
 Պուտ մեր էքին,
 Պուտ ձեր էքին,
 Պուտ մեր էքին,

էքի ջրեմ,
 էքի քաղեմ.
 Կալկուն (վարսակապ) կարեմ,
 Օրոն (ապակէ կոճակ) շարեմ:

Երգողին ձեռքերի վերայ պոսոցնում են: Եթէ նա սխալուեց, այն ժամանակ ձեռք կրճնի երկու աղջիկներին նորա Հետ նա, որի ընտուլթիւնը որոշում է քարէ վիճակով, այսինքն քարի մի կողմը թաց, միւս կողմը չոր, քարը ձգում են վերև, որ ընտրած կողմը վերի կողմը լինի, ընտրողը կրճնի ձեռքը:

8.

Ալէքսանդրապոլում երկու աղջիկ, մէջք մէջքի տուած, միմեանց փոփոխակի բարձրացնում են և տակինը հարցնում է ու պատասխան ստանում:

— Տակդ ինչ կայ.
 « Եօրդան դօշակ.

— Վրէդ ինչ կայ
 « Ասող ու լուսնեակ:

9. Զ Ա Ն Գ Ա Կ

Հարուրի Ուլիա Նորաշէն գիւղում երկու տղայ կամ երկու աղջիկ, մէջք մէջքի տուած, երեք անգամ փոփոխակի իրար բարձրացնում են մէջքի վերայ և տակինը հարցնում է

«զայդանք», վրայինը պատասխանում է «պամբնաք»։ Իւրաքանչիւրը ելնք անգամ բարձրացնելով և ասելով, վերջապէս տակինը հարցնում է և ստանում է պատասխան.

- | | |
|----------------------|----------------------|
| —Էդ վնն ի ելէ տնիսը, | —Չամի՛կ, փշատ. |
| «Ես եմ, | —Իմ պեաժինը կպախէ՞ս. |
| —Ի՞նչ ես ուզելի. | «Կպախեմ. |
| «Քար քշերք: | —Դէ ար տար: |
| —Ի՞նչ ես քշուելի. | |

Այդ բոլոր խօսքերի ժամանակ Հեծածը մնում է անշարժ և միայն վերջին խօսքից լսող իջնում է և մի բոպէից լսող նորից Հեծնում է և տակինից հարց ստանալով ինքը պատասխանում է:

- | | |
|--------------------------|------------------------|
| —Էդ վնն ի ելէ տնիսը, | —Իմ պեաժին փշատը պէրբի |
| «Ես եմ, քար քշերք եմ պէ- | «Կատուն տարաւ: |
| րէ, առ տար. | |

Այս խօսքի վերայ՝ տակինը վրայինին կատու ընդունելով, սկսում են միմեանց զգզզել:

10. Մ Ա Լ Ե Ա Ք Ս Ի Մ Ա

Այլ քսանդրապօլում աղջկունք երկու բաժին լինելով, միմեանց ձեռք բռնած, բաժինը բաժնի դէմ կանգնում է և իրար հարց ու պատասխաններ են տալի:

- | | |
|-----------------|---------------------------------|
| —Մարեմբսիմա, | —Վեարա վեարա քիմ երիշայ |
| «Մեալքի դուդայ | «Հոռոմսիմայ (տալով մինի անունը) |
| —Փերուշայ. | զեալդի բու դաթլար: |
| «Փերդին դիւշայ. | |

Յիշած անունը սրընթաց վազելով՝ եթէ դէմի բաժնի շղթան կարողացաւ կտրել, իւր ցանկացածին տանում է իւր բաժինը, ապա եթէ չկտրեց, ինքը մնում է միւս բաժնում:

11. Չ Ը Խ Կ Ը Ր

Այլ քսանդրապօլում խաղացողները երկու խմբի են բաժանում և իւրաքանչիւրի պարադու խները իրար հարց ու պատասխաններ են տալի:

— Խնամի Խորանն.

« Ի՞նչ է:

— Հաւերս կորան, ձեր տունն է՞.

« Մեր տունն է:

— Քշէ, քշէ գայ:

« Քշեմ, քշեմ, չի գայ:

Տաք տաք ապուռ վրէն լից գայ:

« Լըլեմ, լըլեմ չի գայ:

Մախաթ կոխէ թող գայ:

« Կոխեմ, կոխեմ չի գայ:

— Հաւերս քանի՜ հաւկիթ են ածէ,

Սյս անուան վերայ երկու բաժինն էլ խառնուելով իրար թռչկոտում են և ծափահարում և մի քանի անգամ ասում են « չրիկըր, չրիկըր, Ստեփանն »:

12. ԱՂՈՐԹԻ, ԿԱՄ ԱՅՃ

Առաստաղից, ծառից կամ ալլ չարմար տեղից թռկ կախելով մէջը նստում են և ճօճւում: Խաղը կոչւում է Ղազախում և Երեւանի կողմերում Ճլորթի, Բասենում Ճօճը, Գարալագեաղի նոր Հայերի մէջ Համշիւ կամ քըշկօ, իսկ Հին Հայերի մէջ քիւվանշի:

Ճլորթի ընկնելու համար խմբւում են աղջիկունք կամ տղայք կամ երկուան էլ խառն: Երբեմն ճօճողի ոտերին զարկելով պահանջում են, որ նա իր սրտի ընտրածի անունն ասի: Ճլորթի ժամանակ երգում են:

Ա.

Երեւանի կողմերում:

Ձու, չու, չուանդի,

Իմ աղբերը Գեանջայ ա,

Գեանջի խանի դռանն ա,

Սամուր քիւրքը կռանն ա,

Փետէ փետէ մարդիկը,

Երկաթէ կնանիքը,

Փունջ մանկշակ աղջկերքը

Վարդ ու խնձոր տղէրքը:

Բ.

Հին Նախիջևանում:

Քիւ, քիւ, քիւվանջայ,

Իմ աղբէրը Գեանջայ,

Գեանջու խանի դռանը,

Կանանչ կապէն կռանը:

Գ.

Ղազարի Ուղուճթալայ գիւղում:

Ձիւր, լիւր, չիւանջայ,

Իմ աղբէրս Գեանջայ,

Գեանջու դայի դաւանն ա,

Թաւալ քաշեմ ձիւանն ա,

Կայի կտալը կեցին, (Հաղած)

Ոկալ քցի ծալքին,

Ծալքը դուժեով լիքը,

Տիւռը թուխ կեօժեով լիքը

Փռւղառ փռւղառ (կարճ,

անշնորհ) մարդիկը,

Ոսկէ քեաքիւլ տղէրքը.

Փռւնջ մանիշակ աղջկէրքը:

Դ.

Ալորթի բաղի,

Ըխձիւրի թաղի,

Ըխձիւրի փուլ կիւայ

Տակուլը ճիւր կեայ:

Հ Ա Ն Ե Լ ՈՒ Կ Ն Ե Ր

Ա.

Ղազարի Ուղուճթալայ գիւղում:

Ծիծեռնակ

Սեռ սուտանայ

Բարձր տանն ա,

Մ ո Ր Ի

Ես լաղազարն եմ,

Խոտ խոտի խառնեմ,

Գիտես թէ՛ դառն եմ,

Կարմիրն խիար եմ,

Երեզակ եւ լուսին

Սար ու լար,

Էրզեան ու լար,

Երկու կաքաւ գնալ ու գալի:

Ս ա Ղ Ը

Ալալա, վալալա,

Տար խաղ արան,

Պիր կալս արան:

Պղինձը եւ կասկարիճքը

Երարը չոքեց,

Ասլանը նի ըլաւ:

Մ ա Տ Ն Ե Ր

Իմ հօրանց տասը եղբ,

Տասն էլ զաշղաշ,

Մ կ Ր ա Տ Ը

Մի կով իմ հօրանք,

Մատերս կոխեմ քամակը,

Արուճ (որոճ) է՛ անուռ:

Ոստայնամորի ոստայնակները

Մի ձորում երկու աղուէս

Ճուներ են զնում: